



VEOLIA
Զուր

«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ



ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՆՎԱՐ 2019



 **VEOLIA**
Զուր

1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում	11
1.3. Ջրահեռացման համակարգ	11
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	13
1.5. Էներգահամակարգ	14
1.6. Մեքենա-մեխանիզմներ	17
2. Առևտրային տնօրինություններ	18
2.1. Բաժանորդների տվյալներ	19
2.2. Հասույթ	19
2.3. Գանձում	22
2.4. Դեբիտորական պարտքեր	22
2.5. Ջրաչափեր	24
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	24
3. Տեխնիկական տնօրինություն	25
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	26
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	28
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	30
3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ	31
3.5. Ջրատար համակարգի բարելավում	34
4. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ	35
4.1. Համակարգչային ցանց	36
4.2. Ինտերակտիվ համակարգ	36
5. Լրատվական ծառայություն	37
6. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն	39
6.1. Փաստաթղթերի մշակում	40
6.2. Դասընթացներ /սեմինարներ	40
6.3. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	41

ՀԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





1.1 ԶՐԱՍԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում շահագործման տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված բազմաթիվ աշխատանքներ: Վերջիններիս հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև:

Քաղաք Երևան

- Ահարոնյան փողոցում գրանցված ճնշման տատանումների պատճառը բացահայտելու նպատակով ձեռնարկված ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ 2-րդ շենքի մոտակայքով անցնող $D=200$ մմ պողպատե ջրագծի վրա առկա էր գաղտնի վթար: Վթարի հայտնաբերումից ու վերացումից հետո նշված փողոցում բարձրացավ ջրի ճնշումն ու խնայվեց $Q=7$ լ/վ ջրաքանակ:



Ահարոնյան փողոց 2 շենքի ջրամատակարարման սխեմա

- Շավրոյան փողոցում շահագործումից դուրս են բերվել $D=150$ մմ $L=100$ գծմ և $D=100$ մմ $L=270$ գծմ ջրագծեր, ինչի շնորհիվ տնտեսվել է $Q=3.5$ լ/վ ջրաքանակ: Իսկ Քանաքեռ 12-րդ փողոցի և 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի խաչաձևում առկա $D=50$ մմ $L=50$ գծմ հին ջրագիծը խցափակման միջոցով շահագործումից հանելու արդյունքում բարելավվեց տեղի ջրամատակարարումը:



Շավրոյան փողոցի ջրամատակարարման սխեմա



Քանաքեռ 12-րդ փողոցի ջրամատակարարման սխեմա

- Տիգրանյան փողոց 21 տան մոտակայքում արձանագրված վթարի վերացման աշխատանքները մեկնարկեցին ահագանգից կարճ ժամանակ անց: $D=50$ մմ ջրագծի վթարված հատվածը նորով փոխարինելու արդյունքում խնայվեց նաև $Q=3$ լ/վ ջրաքանակ:



Տիգրանյան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Փափազյան փողոցում առկա $D=50$ մմ $L=35$ գծմ ջրագիծը հետագա շահագործման համար պիտանի չէր: Այն խցափակման միջոցով շահագործումից դուրս հանելուց հետո ցանցը դարձել է կառավարելի և վերացել է գաղտնի վթարների առաջացման հավանականությունը:



Փափազյան փողոցի ջրամատակարարման սխեմա



Դավթաշեն 5-րդ ջրամատակարարման սխեմա

● Զովունի գյուղի 17-րդ փողոցով անցնող $D=100$ մմ թուջե խողովակի վթարը վերացնելու և $L=94$ գծմ թուջե ջրագծի հատվածը շահագործումից հանելու նպատակով իրականացված աշխատանքների արդյունքում տնտեսվել է $Q=1.0$ լ/վ ջրաքանակ:



Զովունի գյուղի 17-րդ փողոցի ջրամատակարարման սխեմա



Տիգրան Մեծի 3-րդ նրբանցք

● Տիգրան Մեծի 3-րդ նրբանցքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և վերացվել է թվով 4 վթար: Իրականացվել է $D=25$ մմ ջրագծի խցափակում, $D=20$ մմ ջրագծի խցափակում 3 տեղ, $D=20$ մմ քայքայված պողպատե ջրագիծը փոխարինվել է $D=20$ մմ մետաղապլաստե խողովակներով: Արդյունքում խնայվել է մոտ $Q=4.5$ լ/վ ջրաքանակ:

● Սարի Թաղ 17 և 19ա փողոցներում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և $D=20$ մմ, $D=50$ մմ, $D=80$ մմ, $D=100$ մմ և $D=150$ մմ ջրագծերի խցափակման և ձեղքերի գոդման միջոցով վերացվել է թվով 6 վթար, ինչի արդյունքում խնայվել է մոտ $Q=10$ լ/վ ջրաքանակ:



Սարի Թաղ 17 և 19ա փողոցներ

Քաղաք Վանաձոր

● Քաղաքի Երևանյան 72 և 76 շենքերում ջրամատակարարումը կատարվում էր 6-ժամյա գրաֆիկով, իսկ տեղի բնակիչներն էլ հաճախ ահագանգում էին կրկնվող վթարների և ջրի որակի խնդիրներով: «Լոռի» տեղամասի և գոտիավորման խմբի կողմից իրականացված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ D=50 մմ տրամագծով նոր ջրագիծ կառուցելու և D=80 մմ տրամագծով վթարային ջրագծի հնամաշ հատվածը փոխարինելու արդյունքում հնարավոր է ոչ միայն լուծել վթարների հարցը, այլև այն միացնել շուրջօրյա ջրամատակարարմամբ խողովակաշարին: Կազմակերպված աշխատանքների արդյունքում տեղի բաժանորդներն այժմ արդեն ունեն որակյալ և շուրջօրյա ջրամատակարարում:



Երևանյան 72 և 76 շենքեր

Քաղաք Գավառ



● Գավառ քաղաքում և Կարմիրգյուղում իրականացված վթարառոտնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է թվով 2 վթար՝ «Կաբելի գիծ» կոչվող D=75 մմ պողպատե և Կարմիրգյուղում D=150 մմ թուջե ջրագծերի վրա: Վթարի վերացման նպատակով իրականացվել է D=75 մմ պողպատյա խողովակի ճեղքի գոդում էլ. եռակցումով և D=150 մմ թուջե խողովակի կարանահպում: Կատարված աշխատանքների արդյունքում խնայվել է մոտ Q=6 ր/վ ջրաքանակ:

Քաղաք Սպիտակ

● Շահումյան փողոցով անցնող D=40 մմ քայքայված ջրագիծն անցնում էր սեփական տարածքներով: Այն նոր կառուցված D=32 մմ L=80 մ պոլիէթիլենային շրջանցող խողովակաշարով փոխարինելու շնորհիվ շահագործումից հանվել է D=40 մմ L=80 մ ջրագիծ և ցանցը դարձել կառավարելի:



Շահումյան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Մեծամոր քաղաքի ԱՀԿ ճանապարհի D=150 մմ L=100 գծմ և Լեռնագոգ համայնքի 5-րդ փողոցի D=150 մմ L=130 գծմ վթարային վիճակում գտնվող պողպատյա խողովակներն ամբողջովին քայքայված էին, ինչն էլ հանգեցնում էր հաճախակի վթարների, ջրակորուստի և հետագա շահագործման անհնարինությանը:



- «Արմավիր» տեղամասի աշխատակիցների կողմից Մեծամոր քաղաքի ԱՀԿ ճանապարհի և Լեռնագոգ համայնքի 5-րդ փողոցի կոռոզիայի ենթարկված խողովակները փոխարինվել են համապատասխանաբար D=63 մմ L=100 գծմ և D=125 մմ L=130 գծմ պոլիէթիլենային խողովակներով:



- Աշխատանքների կատարման ընթացքում փոխարինվել են նաև հին ջրագծերից սնվող թվով 10 բաժանորդների անհատական միացումները:



Կատարված աշխատանքների արդյունքում ավելացել է ջրամատակարարման շարունակականությունը, խնայվել է ջրաքանակ, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կրճատվել են շահագործման ծախսերը:

Քաղաք Ապարան

- Մաղունց, Գեղաղիր և Բերքառատ համայնքները սնուցող ջրատարը գտնվում է Արագած լեռան ամենաբարձր գագաթի լանջին: Այստեղ ցրտաշունչ ձմեռն անանցանելի է դարձնում մարդատար մեքենաներով ջրատարին հասնելու բոլոր ճանապարհները: Մակայն ժառանգած այս ջրատարի խնդիրները վերացնելու համար Ապարան տեղամասն առավել քան զինված էր. գործի դրվեց ձյունազնացր: Համայնքներին անջուր չթողնելու նպատակով դժվարահաս վայրերում աշխատանքներն իրականացվեցին առավելագույն արագությամբ. գողումով և կարանահպումով վերանորոգվեցին ջրատարի քայքայված երեք հատվածներն ու ջուրն այժմ անարգել հոսում է նշված գյուղեր դարձյալ 24-ժամյա տևողությամբ:



Լճաշեն համայնք




- Համայնքի ջրամատակարարումը վատթարացել էր առաջացած ցածր ճնշման պատճառով: Մևան տեղամասի աշխատակիցների կողմից կատարված վթարառոտնողական աշխատանքների արդյունքում Լճաշենի 1-ին փողոցով անցնող և համայնքը սնող D=160 մմ պոլիէթիլենային խողովակի վրա հայտնաբերվել էր վթար մոտ Q=3-5 ր/վ ջրի արտահոսքով:

- «Արևելք» ՍՏ աշխատակազմի պլաստիկ գողող-վարորդների օպերատիվ աշխատանքի արդյունքում վերացվել է D=160 մմ պոլիէթիլենային խողովակի վրա առկա վթարը, և Լճաշեն համայնքի կանոնավոր ջրամատակարարումը վերականգնվել է:



Բենիամին համայնք

● Գյուղում ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է $L=500$ գծմ $d=50$ մմ հին ջրագիծ, որը խցափակման միջոցով շահագործումից դուրս հանելու արդյունքում խնայվել է $Q=1.0$ լ/վ ջրաքանակ:



Բենիամին համայնքի ջրամատակարարման սխեմա

Կապս համայնք



Կապս համայնքի ջրամատակարարման սխեմա

● Համայնքի վերջնամասում գրանցված վթարի վերացման նպատակով գոտիավորման խմբի կողմից ձեռնարկված ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ հարակից դաշտով անցնում էր $D=125$ մմ քայքայված ջրագիծ, որը միացված էր Ղազանչի 1 ջրատարին, այնուհետ Կապս գյուղի ջրամատակարարման ցանցին, մինչդեռ դրանից որևէ բաժանորդի սնուցում չէր գնում: Վերոնշյալ $L=100$ գծմ խողովակը շահագործումից հանելու շնորհիվ տնտեսվեց $Q=2.5$ լ/վ ջրաքանակ՝ համայնքի ցանցը դարձնելով կառավարելի:

Հունվար ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարած աշխատանքները հակիրճ նկարագրվում են ստորև ներկայացված Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	սեղ	1,407
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	20,070
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	15,810
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	5,550
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	18
Շահագործումից հանված ջրագիծ	մ	2,011
Կառուցված ջրագիծ	մ	1,772
Կառուցված կոյուղագիծ	մ	56
Վերացված գաղտնի վթարներ	հատ	48
Փոխարինված փական	հատ	153
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	0
Սաքրված դիտահոր	հատ	409
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	69
<i>Վերացված վթարներ</i>		
Ջրամատակարարման ցանցում	հատ	1,193
Ջրահեռացման ցանցում	հատ	4,140
Պոմպակայաններում	հատ	183
Սաքրված անձրևընդունիչ	հատ	7

Հունվար ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2՝ Վերացված վթարների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամաս	Պոլիէթիլենային խողովակներ	Մետաղական խողովակներ	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
1	Արաբկիր	2	44	0
2	Զեյթուն	1	37	0
3	Մաշտոց	4	51	0
4	Շահումյան	2	32	0
5	Ալավերդի	5	26	0
6	Բերդ	8	2	0
7	Նոյեմբերյան	7	6	0
8	Իջևան	14	12	0
9	Ստեփանավան	5	12	0
10	Տաշիր	7	0	0
11	Ապարան	2	15	0
12	Լոռի	30	43	0
13	Շիրակ	37	54	0
14	Արթիկ	15	11	0
15	Սպիտակ	1	19	0
16	Թալին	3	1	0
17	Աշոցք	2	7	0
18	Էջմիածին	15	25	0
19	Աշտարակ	11	14	0
20	Հրազդան	4	4	0
21	Չարենցավան	2	14	0
22	Աբովյան	5	26	0
23	Կենտրոն	3	36	8
24	Հյուսիս	0	23	31
25	Հարավ	8	24	9
26	Էրեբունի	3	51	18
27	Արմավիր	4	86	27
28	Արտաշատ	56	44	11
29	Արարատ	33	42	22
30	Մասիս	18	14	15
31	Գավառ	11	3	41
32	Սևան	10	4	7
33	Մարտունի	1	6	0
34	Վարդենիս	0	3	6
35	Ճամբարակ	1	0	1
36	Դիլիջան	4	21	16
37	Վայք	1	0	10
38	Եղեգնաձոր	3	6	4
39	Ջերմուկ	0	2	0
40	Սիսիան	5	7	21
41	Գորիս	2	6	19
42	Կապան	15	24	18
43	Մեղրի	1	1	7
	Ընդամենը	361	858	291

Վերոնշյալ աղյուսակը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում գրանցված 1,510 վթարների 26 %-ը վերաբերում է Երևանին, իսկ 74 %-ը՝ մարզերին, ընդ որում

- Երևանում գրանցված 321 վթարների 7 %-ը կազմում են պոլիէթիլենային, իսկ 93 %-ը՝ մետաղական խողովակների վրա տեղի ունեցած վթարները:
- մարզերում գրանցված 898 վթարների 38 %-ը կազմում են պոլիէթիլենային, իսկ 62 %-ը՝ մետաղական խողովակների վրա տեղի ունեցած վթարները:



1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հունվար ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:


Աղյուսակ 3՝ Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ								
	15	20	25	32	40	50	65	100	Ընդամենը
Տեղադրված	95	17	3	2	1	3	1	1	123
Փոխարինված	153	12	0	1	1	1	0	0	168
Տեղափոխված	4	0	0	0	1	0	0	0	5
Տեխ. Ակտ	34	11	0	1	1	0	0	1	48
Ընդամենը	286	40	3	4	4	4	1	2	344

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 344 ջրաչափ: Կատարված աշխատանքների 83 %-ը վերաբերել է 15 մմ, իսկ մոտ 12 %-ը՝ 20 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՅԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● Մոսկովյան փողոցի 13 շենքի D=150 մմ ագրեցեմենտե կոյուղագծի վրա առկա կոտրված հանգույցները առաջացրել էին նստվածքներ, ինչի հետևանքով հաճախակի տեղի էին ունենում խցանումներ: Կոյուղագծի նորմալ շահագործման համար անբավարար էր նաև կոյուղագծի թողունակությունը: Կենտրոն տեղամասի աշխատակիցների կողմից ապրեցեմենտե D=150 մմ կոյուղագծի L=12 գծմ երկարությամբ հատվածը փոխարինվել է D=200 մմ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով: Կատարված աշխատանքների արդյունքում կոյուղագիծն այժմ գործում է անխափան, բարձացել է վերջինիս շահագործման հուսալիությունը և կրճատվել են շահագործման ծախսերը: Կատարված աշխատանքների արդյունքում կոյուղագիծը գործում է անխափան:




Հունվար ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև՝ Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում
			հատ	հատ
1	Արարկիր	0	231	18
2	Մաշտոց	1,750	219	0
3	Շահումյան	2,350	198	0
4	Զեյթուն	1,080	396	0
5	Շիրակ	400	495	0
6	Ալավերդի	1,195	86	0
7	Ապարան	28	112	0
8	Արթիկ	0	78	0
9	Աշոցք	0	15	0
10	Բերդ	620	11	0
11	Իջևան	775	41	0
12	Լոռի	2,391	180	4
13	Նոյեմբերյան	297	39	0
14	Սպիտակ	0	10	0
15	Ստեփանավան	1,105	13	0
16	Թալին	0	15	0
17	Տաշիր	210	7	0
18	Էջմիածին	0	126	0
19	Չարենցավան	1,045	68	0
20	Արմավյան	1,520	56	0
21	Հրազդան	620	84	0
22	Աշտարակ	1,685	21	0
23	Կենտրոն	410	257	17
24	Հյուսիս	1,100	277	2
25	Հարավ	250	411	0
26	Էրեբունի	350	179	0
27	Արմավիր	1,500	113	0
28	Արտաշատ	1,370	94	0
29	Արարատ	1,500	87	0
30	Մասիս	700	61	0
31	Գավառ	0	37	0
32	Սևան	1,400	76	10
33	Մարտունի	0	14	0
34	Վարդենիս	240	12	0
35	Ճամբարակ	0	11	0
36	Դիլիջան	0	31	0
37	Վայք	85	11	0
38	Եղեգնաձոր	0	7	5
39	Ջերմուկ	0	21	0
40	Սիսիան	0	74	0
41	Գորիս	0	20	0
42	Կապան	140	46	0
43	Մեղրի	0	23	0
	Ընդամենը	26,116	4,363	56

Վերոնշյալ աղյուսակը ցույց է տալիս, որ հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր առմամբ կատարված աշխատանքների 31 %-ը վերաբերում է Երևանին, իսկ 69 %-ը՝ մարզերին:



1.4. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՅԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները.


- Մարտունի ԿՄԿ-ում փոխարինվել են օդամուղի ռոտորի մաշված թիակները: Ստուգվել են նաև տիղմը և ավազը տեղափոխող կոնվեյերների պոլիէթիլենե պաշտպանիչ պատյանները: Կատարվել է բոլոր սարքավորումների կարգաբերում և զննում:

- Վարդենիսի ԿՄԿ-ում ստուգվել են տիղմը և ավազը տեղափոխող կոնվեյերների պոլիէթիլենե պաշտպանիչ պատյանները: Մաքրվել է խցանված ուղղահայաց կոնվեյերը Ստուգվել և նորերով են փոխարինվել օդամուղի ռոտորի ածխե թիակները և օդի ֆիլտրը:

- Վարդենիսի ԿՊ-ի Wilo մակնիշի պոմպն անսարք էր, որի արդյունքում պոմպակայանը չէր աշխատում: Այն վերանորոգվել է և այժմ աշխատում է անխափան:


- Սևան ԿՊ-ում այրված էլեկտրական հաշվիչը փոխարինվել է նորով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են թե՛ էլեկտրական, թե՛ մեխանիկական սարքերը, կատարվել են կարգավորումներ: Ստորև Աղյուսակ 5-ում ներկայացված են մանրամասներ:



Աղյուսակ 5՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	68,906	30.6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	80,772	28.8
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	135,274	3.6
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	98,258	4.7
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	129,924	21.6
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	19,525	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	9,248	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	14,000	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	25,000	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0



1.5. ԷՆԵՐԳԱՅԱՍԱԿԱՐԳ


Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6՝ Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

h/h	Հասցեն	Աշխատանքների նկարագիրը
1	Վ.Համբարձումյան 14 - 39	Էլ. սարքերի զննում կարգավորում
2	Ն.Տիգրանյան 7	Պոմպի աշխատանքի կարգավորում
3	Մամիկոնյանց 23/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
4	Ա. Ավետիսյան 70	Էլ. սարքերի զննում կարգավորում
5	Սունդուկյան 7 - 81	Էլ. սարքերի զննում կարգավորում
6	Սունդուկյան 17 - 88	Պոմպի աշխատանքի կարգավորում
7	Կոմիտաս 46	Պոմպի աշխատանքի կարգավորում
8	Կոմիտաս 48ա	Պոմպի աշխատանքի կարգավորում
9	Կոմիտաս 50	Պոմպի աշխատանքի կարգավորում
10	Մամիկոնյանց 62	Պոմպի աշխատանքի կարգավորում
11	Ադոնց 3	Պոմպի աշխատանքի կարգավորում
12	Ադոնց 13,17	Պոմպի աշխատանքի կարգավորում
13	Մամիկոնյանց 36/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
14	Կոմիտաս 58 - 21	բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ, Պոմպի աշխատանքի կարգավորում
15	Ադոնց 9Շ 37	Պոմպի աշխատանքի կարգավորում, (շարունակելի)
16	Համբարձումյան 8/1 - 52	Աշխատանքը կատարվել է “Հորիզոն ԱՊԸ”-ի կողմից, բարձր ճնշման ռելեի նորոգում 2 հատ, էլ. թողարկիչի նորոգում 1 հատ
17	Համբարձումյան 97 - 14	Աշխատանքը կատարվել է “Հորիզոն ԱՊԸ”-ի կողմից, բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, (խձուկի տեղադրում)
18	Ադոնց 19. 37	Աշխատանքը կատարվել է “Հորիզոն ԱՊԸ”-ի կողմից, (Փոխվել է բանվորական անիվ, 2բանվորական անիվ, 3 բանվորական անիվի կաղապար, 1 վերանորոգման հավաքածու, 2 առանցքակալ, 1 լիսեռ)
19	Պռոշյան գյուղ 5Փ 17ՆԸԲ. 29S	Պոմպի աշխատանքի կարգավորում
20	Սիլիկյան թաղ.	Պոմպի աշխատանքի կարգավորում
21	Վրացական 6 -9	Պոմպի աշխատանքի կարգավորում
22	Ավետ Ավետիսյան 70 - 126	Աշխատանքը կատարվել է “Հորիզոն ԱՊԸ”-ի կողմից, փականի տեղադրում տր=0 մմ, 1 հատ, բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ
23	Զարյան 3 - 26	Պոմպի աշխատանքի կարգավորում
24	Մ. Մարյան 24/1 - 64	Պոմպի աշխատանքի կարգավորում
25	Ավետ Ավետիսյան 70 - 112	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, շարժիչի փոխարինում 1 հատ, (վերանորոգում)
26	Վրացական 6 - 9	Պոմպի աշխատանքի կարգավորում, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, բարձր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ, ցածր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ, (պոմպի պլաստիկ միացման դետալների, 100լ բաքի, 4 անցումների, 2 մոնոմետրի փոխարինում)
27	Ավետ Ավետիսյան 70 - 126	Պոմպի աշխատանքի կարգավորում
28	Կոմիտաս 5010	Պոմպի աշխատանքի կարգավորում, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, (պոմպի պլաստիկ միացման դետալների և 5 անցումների փոխարինում)
29	Վրացական 6	Պոմպի աշխատանքի կարգավորում
30	Ա.Խաչատրյան 26/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
31	Ավետ Ավետիսյան 70 - 29	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, (1 թողարկիչի փոխարինում)
32	Կոմիտաս 50	Էլ. սարքերի զննում կարգավորում

h/h	Պումպակայանների հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
33	Վրացական 6 - 75	Պումպի աշխատանքի կարգավորում
34	Վաղարշյան 1 և 3 շ.2.	Պումպի աշխատանքի կարգավորում
35	Համբարձումյան 8/1 - 77	Պումպի աշխատանքի կարգավորում
36	Հ. Էփին 5	Էլ. սարքերի գննում կարգավորում
37	Զարյան 3 - 26	Պումպի աշխատանքի կարգավորում
38	Բաղրամյան 25 - 60	Պումպի աշխատանքի կարգավորում
39	Կումիտաս 12	Պումպի աշխատանքի կարգավորում
40	Արդության 29	Պումպի աշխատանքի կարգավորում
41	Հ.Էփինի 5	Եռաֆազ թողարկչի փոխարինում 1 հատ, խցուկի տեղադրում 1 հատ, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից
42	Սունդուկյան 1	Եռաֆազ թողարկչի փոխարինում 1 հատ, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից
43	Աբելյան 17	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, բարձր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ, թողարկչի տեղադրում 1 հատ
44	Էստոնական 12/1	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, ցածր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ, առանցքակալի տեղադրում 2 հատ, թողարկչի տեղադրում 1 հատ
45	Ն. Զարյան 3 - 8	առանցքակալի տեղադրում 1 հատ, ջերմային ռելեի տեղադրում 1 հատ, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող
46	Հակոբյան 7	Պումպի աշխատանքի կարգավորում, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, Էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ, ցածր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ
47	Քանաթեռ ՀԷԿ	Պումպի աշխատանքի կարգավորում
48	Արծրունի 92 - 56	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, փականի տեղադրում տր=0 մմ, 1 հատ, խցուկի տեղադրում 1 հատ
49	Ադոնց 9Շ. 37ԲՆ.	Պումպի աշխատանքի կարգավորում
50	Կիևյան 4/2	Պումպի աշխատանքի կարգավորում
51	Ափին 5 Շ. 38 Բ.	բաքի միացման դետալներ 1 հատ, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող
52	Ն. Դուման 51	Պումպի աշխատանքի կարգավորում
53	Կիևյան 4/2	Պումպի աշխատանքի կարգավորում
54	Էփին 6 - 8	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, բարձր ճնշման ռելեի փոխարինում 2 հատ
55	Ազատության 11ա	Պումպի աշխատանքի կարգավորում
56	Ա. Խաչատրյան 25 - 14(26)	Պումպի աշխատանքի կարգավորում
57	Խաչատրյան 62	Պումպի աշխատանքի կարգավորում
58	Տոլբուխին 34շ	ցածր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ, ջերմային ռելեի տեղադրում 1 հատ
59	Վաղարշյան 24/1	բարձր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ, Էլ. թողարկչի նորոգում 1 հատ
60	Հակոբյան 9	Էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ, ցածր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ
61	Կումիտաս 48/1 - 88	առանցքակալի տեղադրում 2 հատ, Պումպի աշխատանքի կարգավորում, Էլ. թողարկչի նորոգում 1 հատ
62	Գյուլբենկյան 39/1 - 45	Պումպի աշխատանքի կարգավորում
63	Կումիտաս 48/1 - 100	Պումպի աշխատանքի կարգավորում
64	Սունդուկյան 15/1 - 30	Պումպի աշխատանքի կարգավորում
65	Կումիտաս 12 - 80	Պումպի աշխատանքի կարգավորում, Էլ. հոսանքի լարերի նորոգում երկ=0 մ
66	Կումիտաս 14	Պումպի աշխատանքի կարգավորում
67	Կումիտաս 8	Պումպի աշխատանքի կարգավորում
68	Արաբկիր 51Շ 3-69	Պումպի աշխատանքի կարգավորում
69	Ավետիսյան 70 - 122	Պումպի աշխատանքի կարգավորում
70	ք.Եղվարդ, Սումգայիթ թաղամաս	Էլ. սարքերի գննում կարգավորում
71	Խաչատրյան 23 - 54	Պումպի աշխատանքի կարգավորում
72	Ֆրիկ 4-35	Պումպի աշխատանքի կարգավորում
73	Փափազյան 11	Պումպի աշխատանքի կարգավորում
74	Շահումյան 8/1	Պումպի աշխատանքի կարգավորում
75	Մամիկոնյանց 1/1	Պումպի աշխատանքի կարգավորում
76	Մամիկոնյանց 23	Պումպի աշխատանքի կարգավորում
77	Մամիկոնյանց 62	Պումպի աշխատանքի կարգավորում
78	Մամիկոնյանց 40	Պումպի աշխատանքի կարգավորում
79	Սունդուկյան 27	Պումպի աշխատանքի կարգավորում
80	Փափազյան 13	Պումպի աշխատանքի կարգավորում
81	Քոչար 18 - 112	Պումպի աշխատանքի կարգավորում
82	Թբիլիսյան 7	Աշխատանքը կատարվել է “Հորիզոն ԱՊԸ”-ի կող, Էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ

h/h	Պումպակայանների հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
83	Դրո 24/1 - 27	Աշխատանքը կատարվել է «Հորիզոն» ՍՊԸ-ի կողմից, բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ
84	Ռուբինյանց 23/1	Պումպի աշխատանքի կարգավորում
85	Ազատության 12/1	էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, ցածր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, (1 լիսեռ)
86	Ահարոնյան 2/1 - 48	Պումպի աշխատանքի կարգավորում
87	Ուլնեցու 51 - 13	Պումպի աշխատանքի կարգավորում
88	Ուլնեցու 66	Պումպի աշխատանքի կարգավորում
89	Ահարոնյան 2/1	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, եռաֆազ թողարկիչի տեղադրում 1 հատ, (Փոխվել է 1 մեմբրան 300լ)
90	Դրո 14/1 - 28	Պումպի աշխատանքի կարգավորում
91	Ահարոնյան 2/12	բաքի միացման դետալներ 1 հատ, փականի տեղադրում տր=25 մմ, 1 հատ, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող
92	Ահարոնյան 182	Պումպի աշխատանքի կարգավորում
93	Դրո 14/1 - 28	Պումպի աշխատանքի կարգավորում
94	Թբիլիսյան խճ. 1, 222	Պումպի աշխատանքի կարգավորում
95	Թբիլիսյան խճ 352	Պումպի աշխատանքի կարգավորում
96	Սարկավազ 72	Պումպի աշխատանքի կարգավորում
97	Սարկավազ 14փ. 402	Պումպի աշխատանքի կարգավորում
98	գ.Պոռչյան	Պումպի աշխատանքի կարգավորում
99	Սիսակյան 22	Պումպի աշխատանքի կարգավորում
100	Պոռչյան գյուղ	պումպի վերանորոգում 1 հատ
101	Սիսակյան 22	էլ. սարքերի զննում կարգավորում
102	Շինարարների 15/1	Պումպի աշխատանքի կարգավորում
103	Շինարարների 15/2	Պումպի աշխատանքի կարգավորում
104	Բաշինջաղյան 13	Պումպի աշխատանքի կարգավորում
105	Էստոնական 12	Պումպի աշխատանքի կարգավորում
106	Աբելյան 17	Պումպի աշխատանքի կարգավորում
107	Բաշինջաղյան 2 ՆՐԲ. 1 - 31	Աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, պումպի վերանորոգում 1 հատ
108	գ. Պոռչյան 5Փ	Շարժիչի փոխարինում 1 հատ
109	Սարգսյան 2նրբ. 11 շենք	Աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կող, եռաֆազ թողարկիչի փոխարինում 1 հատ, ցածր ճնշման ռելեի փոխարինում 1 հատ, (փոխվել է 1 ավտոմատիկայի կառավարիչ)
110	Էրեբունու փ. 21	Պումպակայանը սնուցող մալուխի զննում և հատվածի նորոգում
111	Արցախի փողոց /հոսքաչափ/	Հոսքաչափի վթարված հաղորդալարերի փոխարինում, օգտագործվել է մալուխ 90գծ/մ
112	Նարեկացի 41	Պումպակայանը սնուցող հաղորդալարի զննում և հատվածի նորոգում
113	Արին Բերդի ՕԿՁ	էլ. փականի աշխատանքի կարգավորում
114	Նուբարաշեն /հոսքաչափ/	Հոսքաչափի զննում և մալուխի վերանորոգում, օգտագործվել է մալուխ 35գծ/մ
115	Արցախի վերջնամաս	Հոսքաչափի էլ. մալուխի փոխարինում 50գծ/մ
116	Ազատամարտիկների 78/2	Պումպակայանը սնուցող զննում և մալուխի փոխարինում, օգտագործվել է 30 գծ/մ 4x6 ալյումինե մալուխ
117	Արցախ 24	d=50մմ փականի տեղադրում
118	Արցախ 20/1	d= 2 1/2 BT CP փականի և d=65մմ ճկուն միացում փոխարինում մեկական հատ, Պումպի մուտքագծի փականի փոխարինում
119	Արին Բերդի ՕԿՁ	Ջրամբարի էլ. սնուցման մալուխի նորոգում



1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԳՄԱՆԵՐ

Հունվարին իրականացվել են մեքենա-մեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել և պատրաստվել են հետագա շահագործման համար:



Ընդհանուր առմամբ աշխատանքներ են կատարվել ավելի քան 100 մեքենա-մեխանիզմի վրա՝ տարբեր ընթացային մասերի փոխարինում նորերով, շարժիչի նորոգում, առջևի և հետևի համակարգերի նորոգում, և այլն: Փոխարինվել են շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, գտիչներ և անտիֆրիզ, անվադողեր և մարտկոցներ:

Կատարված աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, ինչը նպաստում է համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները ժամանակին վերացնելու խնդրի լուծմանը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Գործընթացի առավել աղյուսակետ կազմակերպման համար ԵՏՍՍ-ում ներգրավվել են 184, իսկ ՄՏՍՍ-ում՝ 132 պայմանագրային աշխատակից: 01.02.2019 թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՍ-ում 253,809, իսկ ՄՏՍՍ-ում՝ 187,352 պայմանագիր:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2018թ. հունվար - 2019թ. հունվար ամիսներին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	362,942	244,239	67.3
		Իրավաբանական անձ	17,147	9,570	55.8
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	254,966	180,427	70.8
		Իրավաբանական անձ	10,028	6,925	69.1
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	617,908	424,666	68.7
		Իրավաբանական անձ	27,175	16,495	60.7

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հունվար ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	397,919	303,122	76%
		Իրավաբանական անձ	20,221	13,902	69%
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	314,370	185,987	59%
		Իրավաբանական անձ	12,296	7,098	58%
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	712,289	489,109	69%
		Իրավաբանական անձ	32,517	21,000	65%

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): ԵՏՍՍ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 336 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 38 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՍ-ի «Շենգալիթ», «Հյուսիս», «Շահումյան» և ՄՏՍՍ-ի «Լոռի», «Շիրակ» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը:


Հաշվետու ամսում Չափագիտության ազգային ինստիտուտի հետ պայմանագիր չունենալու արդյունքում ջրաչափերի ստուգաչափման լաբորատորիան չի գործել:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2019թ. բաժանորդների հունվար ամսվա սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)




Հունվարին ընկերության առևտրային տնօրինությունների կողմից ձևավորված հասույթի առաջադրանքի կատարողական ցուցանիշները բերված են ստորև աղյուսակի տեսքով.


Տարածաշրջան	Առաջադրանք հազ.ՄՅ	Փաստացի հազ.ՄՅ	Տարբերություն %, հազ.ՄՅ
Երևան	6,450	6,565	1.78
Մարզեր	3,340	3,196	-4.32
Ընդամենը	9,790	9,760	0.30

Ստորև բերված գրաֆիկում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները:

Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



2.3. ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Հունվար ամսին գանձումը ԵՏՍՍ-ում կազմել է 961,127 մլն դրամ (71 %), իսկ ՄՏՍՍ-ում՝ 394,761 մլն դրամ (29 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Գանձում	Հունվար մլն դրամ
Երևան	Առաջադրանք	1,111,564
	Հավաքագրում	961,127
	%	86%
Սարգեր	Առաջադրանք	485,310
	Հավաքագրում	394,761
	%	81%
Ընդամենը	Առաջադրանք	1,596,874
	Հավաքագրում	1,355,888
	%	85%

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Հունվար ամսվա ընթացքում ԵՏՍՍ կողմից կնքվել է թվով 75 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 5.5 մլն դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՍ կողմից՝ թվով 32 պարտքի մարման ժամանակացույց մոտ 2.8 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը՝ ըստ քանակի և գումարի:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2018-19 թ.		Բավարարված		Մերժված		2017-2019 թթ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
3,115	401,373,043	2,280	193,856,375	61	5,120,319	2,869	370,735,729	1,077	90,161,295

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 73 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Պարտքը 01.02.2019թ. դրությամբ (մլն. դրամ)	Այդ թվում հունվար ամսվա հատույթ (մլն. դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	3,005.3	1,170.5
Բնակիչ-բաժանորդներ	2,021.4	768.9
Իրավաբանական անձեր	984.0	401.6
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	2,065.5	338.8
Բնակիչ-բաժանորդներ	1,656.1	190.3
Իրավաբանական անձեր	409.4	148.5
Ընդամենը, այդ թվում	5,070.9	1,509.3
Բնակիչ-բաժանորդներ	3,677.5	959.2
Իրավաբանական անձեր	1,393.4	550.1

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 148.5 մլն դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2019 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Երևան)



2019 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.02.2019 թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	388,860	301,755	78%	19,695	13,899	71%
	Առանց ջրաչափի	9,059	1,367	15%	526	3	1%
Մարզեր	Ջրաչափով	285,758	183,789	64%	11,893	7,094	60%
	Առանց ջրաչափի	28,612	2,198	8%	403	4	1%
Ընդամենը	Ջրաչափով	674,618	485,544	72%	31,588	20,993	66%
	Առանց ջրաչափի	37,671	3,565	9%	929	7	1%

Տվյալների բազայում 01.02.2019թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	514,496	275,528	54%	22,403	4,586	20%
Մարզեր	332,730	84,344	25%	13,968	2,302	16%
Ընդամենը	847,226	359,872	42%	36,371	6,888	19%

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 2,352, իսկ մարզերում՝ 846 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 32, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 123 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Հունվար ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են կատարվել թվով 10 հասցեում, որտեղ առկա 5,073 ջրաչափից փոխարինվել է 2,412 ջրաչափ (մոտ 48 %): Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում տեղադրվել է 1,817, իսկ Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,463 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԳԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ


Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	53	46,628	4,783,046
Մարզեր	102	48,920	8,170,871
Ընդամենը	155	95,548	12,953,917

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՈՒՆ






3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՈՒՆԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի հունվար ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալները՝ 98.3 %, որոնք 0.3 %-ով պակաս են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:


Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն (Երևան)



Հաշվետու ամսվա ընթացքում շահագործման տարածաշրջանների տնօրինություններում թվով 37 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ձնշման լոգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 12-ն անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից: Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ձնշման լոգերների գրաֆիկները.





Ս.թ. հունվարի 24-ին խողովակաշարի ներքին ուսումնասիրման տեսախցիկով ուսումնասիրություն է կատարվել Գառնի-Երևան ջրատարից Խարբերդի ՕԿԶ-ն սնող D=300 մմ տրամագծով խողովակաշարի վրա: Ուսումնասիրվել է մոտ L=50 մ հատված, որի արդյունքում հայտնաբերվել է թիթեղյա արգելք: Այն ապամոնտաժելուց հետո Խարբերդի ՕԿԶ-ն սնող ջրատարի ջրաքանակն ավելացել է $Q \approx 10$ լ/վ:
Ստորև ներկայացված է թիթեղի նկարն ապամոնտաժված վիճակում






3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 16,355 կՎտ/ժ (3.04 %)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բաղախին պոմպեր



● Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:


Ստորև ներկայացված են հունվար ամսվա ընթացքում շեղում ունեցող հասցեներից մի քանիսը.

Հասցե	Հայտնաբերված թերություններ	Ամսական կՎտ/ժամ
Արցախի 28	հավելագրում	280
Արցախի 10	հավելագրում	1,160
Արցախի 20/1	հավելագրում	660
Արցախի 22(Իրացում)	հավելագրում	5,460
Արցախի 28(Իրացում)	հավելագրում	1,330
Ռոստովյան 27	Լարանցում հետագիծը անհայտ. ապամոնտաժված է:	
Ազատամարտիկներ 72	Լարանցում. կազմվել է արձանագրություն և փոխհատուցվել է հասցրած փաստ (51130 Դրամ)	1,476
Ընդամենը		10,366

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 184 հասցե. թերություններ չեն հայտնաբերվել: Հինգ հասցեում հայտնաբերվել են հավելագրումներ, որոնց մասին տեղեկացվել են «ՀԷՅ» ՓԲԸ-ի համապատասխան ծառայությունները՝ թերությունները վերացնելու նպատակով, իսկ 2 հասցեում ապամոնտաժվել են լարանցումներ, որոնցից մեկի համար կազմվել է արձանագրություն: Մյուսի հետագիծը հնարավոր չի եղել պարզել:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 1,382 կՎտ/ժ կամ 5 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին




● Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության շնորհիվ էլ. էներգիայի ծախսը նվազել է 4,435 կՎտ/ժ կամ 11 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ




● Հունվար ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է ամսական 93,736 կՎտ/ժամ կամ 16.21 % (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ), քանի որ ինքնահոս ջրաքանակը նվազել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 150 լ/վ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 99,989 կՎտ/ժամ կամ 4.61 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 124,497 կՎտ/ժ կամ 3,09 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Ընկերության կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- Տրվել են պլանային և վթարային ջրանջատումներ:
- Տեղամասերի սպասարկման տարածքներում իրականացված վթարավերականգնողական աշխատանքների շրջանակներում քարտեզագրվել են ջրագծեր և կոյուղագծեր:
- Շահագործման տեղամասերի ինժեներների կողմից ներկայացրած ջրամատակարարման և ջրահեռացման ցանցում կատարվել է աշխատանքների համակարգում, համապատասխան գծագրերի կազմում և մուտքագրում ԱՏ համակարգ:
- «Ինտերակտիվ» համակարգում տեղամասերի մասնագետ-տեսուչների հետ կատարվել է իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում: Հավաքագրված տեղեկատվությունը ներմուծվել է ԱՏ համակարգ և փոխանցվել առևտրային տնօրինությանը՝ բաժանորդների տվյալների բազայի թարմացման նպատակով:
- ▶ 240 ֆիզիկական բաժանորդի և 80 իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում Երևան քաղաքում

- Բազայում ավելացվել են նոր բաժանորդ կետեր՝ 105 ֆիզիկական և 62 իրավաբանական նոր կետեր:
- Կատարվել է ընկերության կողմից սպասարկվող տարածքներում տեղակայված բաժանորդների տեղադիրքերի ճշտում և կողավորում, ինչպես նաև վերլուծություն լոգեր գոնաների և յուրաքանչյուր կետի բարձրության որոշման համար: Այս աշխատանքները դեռ ընթացքի մեջ են:
- Բազմաբնակարանային և սեփական սեկտորներում կատարվել է բաժանորդ կետերի մշակում և տրվել են կոդեր՝
 - 16,000 սեփական սեկտոր
 - 3,524 իրավաբանական սեկտոր
- Ընթացքի մեջ են սեփական և իրավաբանական բաժանորդների խմբավորման և լրացման աշխատանքները (ըստ սպասարկման տարածքի, լոգերի և լոգեր գոնայի, ժամային գրաֆիկի): Կատարվում են նաև լոգերի կոորդինատի և բաժանորդների (ID-ի) կոորդինատների ստացում և խմբավորում՝ ըստ հասցեի:
- «Մեծ Մասբենի» ՄՊԸ-ի նախկինում կատարած աշխատանքների տվյալների հիման վրա կատարվել է նախկին «Հայջրմուղկոյուղու» սպասարկման տարածքի ջրատարների, կապտածների և ՕԿՁ-ների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և տեղադրում ճիշտ աշխարհագրական դիրքով՝ GIS, Autocad ծրագրերի ձևաչափով:
- Չսպասարկվող գյուղերի (որոնց տարածքով անցնում են ջրատարներ) վերաբերյալ ստեղծվել են կադաստրային քարտեզներ ճիշտ աշխարհագրական դիրքով՝ GIS, Autocad ծրագրերի ձևաչափով:

3.4. ԿԱՐԳԱՎԱՐՄԱՆ ԽՍՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ամսում կարգավարների խումբը SCA-DA և LOCATOR համակարգերի միջոցով առցանց կառավարել և հետևել է ընկերության սպասարկման տարածքում առկա պոմպային ագրեգատների անխափան աշխատանքին, ջրամբարների լցվածությանը, ճնշումային լոգերներին, ջրաչափական սարքերի աշխատանքին և բաշխիչ ցանցի ջրում առկա մնացորդային քլորի համապատասխանությանը սահմանված չափաբաժնին:




Ստորև ներկայացվում է տեղեկատվություն 5 խոշոր վթարների մասին:

- Միսիան քաղաքի ՕԿՁ-ում տեղադրվել է մակարդակաչափ, որից հետո պարզվել է, որ ՕԿՁ-ում տեղի է ունենում ջրթափ, այսինքն՝ տվյալ ՕԿՁ մղվող ջրաքանակը ավելի շատ է, քան ջրասպառումը: «Միսիան» ՕԿՁ-ն սնուցվում է «Շաքե» աղբյուրից ինքնահոս եղանակով: «Շաքե» աղբյուրից տվյալ ուղղությամբ ջրաքանակը նվազեցվել է $Q=10$ լ/վ-ով, որպեսզի ջրթափ այլևս տեղի չունենա, իսկ «Շաքե» աղբյուրից դեպի քաղաք Միսիանի Գետափ թաղամասի ուղղությամբ ջրաքանակն աստիճանաբար նվազեցվել է մինչև $Q=60$ լ/վ, ինչը բավարար է քաղաքի ջրամատակարարումն ապահովելու համար: Փաստացի «Շաքե» աղբյուրից տնտեսվել է $Q=70$ լ/վ ջրաքանակ:

Ստորև ներկայացված է «Շաքե» աղբյուրից դուրս եկող 2 ջրատարների ջրաչափերի գրաֆիկական պատկերը

«Շաքե» աղբյուր




Միսիան քաղաքի գետափ թաղամասով անցնող ջրատարի ճնշման տվյալից ստացված տվյալների գրաֆիկական պատկեր




● Քաղաք Գավառում տեղադրված N «P5.1E» ճնշման լոգերից ստացված տվյալներից պարզվել է, որ քաղաքի տվյալ հատվածով անցնող ջրատարի ճնշումը նվազում է: Այդ մասին տեղեկացվել է «Գավառ» ՇՏ-ի աշխատակիցներին, որոնց կողմից հայտնաբերվել է վթարի ստույգ վայրը: Վթարավերականգնողական աշխատանքներից հետո բնականոն ջրամատակարարումը վերականգնվել է:

Ստորև ներկայացված է վերոնշյալ ճնշման տվյալից ստացված ջրի ճնշման բարձրության գրաֆիկական պատկերը.




● Երևանի Իսակովի պողոտայով անցնող ջրատարի վրա տեղադրված ծախսաչափից ստացված տվյալներից պարզվել է, որ ջրասպառումը տվյալ հատվածում աճել է Q=5 լ/վ-ով: Այդ մասին տեղեկացվել է «Շահումյան» ՇՏ-ի աշխատակիցներին: Վերոնշյալ տեղամասի աշխատակիցների կողմից հայտնաբերվել է վթարի ստույգ վայրը: Հայտարարվել է պլանային ջրանջատում, որից հետո գոդման աշխատանքների միջոցով վթարը վերացվել է: Վթարը վերացնելուց հետո վերականգնվել է ջրամատակարարումը: Ստորև ներկայացված է տվյալ ծախսաչափի ցուցմունքի գրաֆիկական պատկերը.



● Ըստ «Կենտրոն» ՇՏ-ի տարածքում գտնվող Գլինկա փողոցով անցնող ջրատարի ծախսաչափից ստացված տվյալների՝ ջրատարով հոսող ջրաքանակը կտրուկ նվազել է $Q=36$ լ/վ-ից հասնելով $Q=15$ լ/վ: Այդ մասին տեղեկացվել է վերոնշյալ ՇՏ-ին: Շահագործման աշխատակիցների կողմից պարզվել է, որ խափանվել է տվյալ ջրատարի ջրի հոսքը կարգավորող ճնշման կարգավորիչը: Կարգավորման աշխատանքներից հետո ջրամատակարարումը վերականգնվել է:

Ստորև ներկայացված է վերոնշյալ փողոցի ջրատարի ծախսաչափի գրաֆիկական պատկերը.



● Բարաջանյան փողոցով անցնող ջրատարի՝ ջրի հոսքը ֆիքսող ծախսաչափից ստացված տվյալներից պարզվել է, որ տվյալ տարածքում ջրասպառումն ավելացել է $Q=4$ լ/վ-ով: Այդ մասին տեղեկացվել է «Շահույան» ՇՏ-ի աշխատակիցներին: Վերջիններիս կողմից հայտնաբերվել է վթարի ստույգ վայրը:

Ստորև ներկայացված է տվյալ ծախսաչափից ստացված տվյալների գրաֆիկական պատկերը.



3.5. ԶՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱԿՈՒՄ

Մաքրավան-Աբովյան

● Մաքրավան-Աբովյան ջրատարի՝ Սուլակի պոմպակայանի միացման հատվածում իրականացրած ուսումնասիրության և չափումների արդյունքում պարզվել է, որ Մաքրավան պ/կ-ի ջրարտադրությունը $Q=540$ լ/վ-ից նվազեցնելու դեպքում ջրատարի ճնշման նվազման հետևանքով Սուլակի պ/կ-ի կոնտակտային ջրամբար չի լցվում անհրաժեշտ քանակությամբ ջուր: Դրա հետևանքով հնարավոր չէր գործի դնել Մաքրավան պ/կ-ում տեղադրված էներգախնայող ինվերտորային համակարգը: Պարզվել է նաև, որ ջրաքանակի նվազման մեկ այլ պատճառ է հանդիսացել ավազանում տեղադրված $D=150$ մմ լողանային փականը, որի թողունակությունը բավարար չէր: Այն փոխարինվել է $D=200$ մմ լողանային փականով, որի արդյունքում արդեն իսկ $Q=500$ լ/վ ջրաքանակի դեպքում, Սուլակի պ/կ-ի ՕԿՁ լցվում է ավելի քան $Q=8$ լ/վ ջրաքանակ: Այն լրիվ բավարար է համայնքի ջրամատակարարման համար: Նախկին անկանոն աշխատանքային ժամերի հետևանքով Սուլակի պ/կ-ն վերածվել էր «պոմպերի գերեզմանի»: Տրված լուծումներից հետո պ/կ-ի աշխատանքային ժամերը կանոնակարգվել են, ինչպես նաև ջրատար համակարգն ազատվել է ամենօրյա հիդրավիլիկ հարվածներից, ինչպես նաև Մաքրավան պ/կ-ի էլժ էներգիայի ծախսը նվազել է ավելի քան 2000 կՎտ/օր:

Ղազարավան

● Ղազարավանի ինքնահոս ջրատարի վրա տեղադրվել է Յշլետ տիպի հոսքաչափ: Ինչպես նաև նույն ջրատարի վրա հայտնաբերվել է վթար՝ $Q \approx 10$ լ/վ:



Արտաշավան-Արտակ



● Ուսումնասիրվել է Արտաշավան-Արտակ պ/կ-ի մոտ գտնվող ջրատարի հատվածը և արդյունքում կորեյատորի օգնությամբ պարզվել է, որ Կարբի ձորի մոտակայքում կա ջրի կորուստ՝ $Q \approx 10$ լ/վ:

Իջևան

● Կատարվել են ուսումնասիրություններ Իջևան տեղամասի Ազատամուտի պ/կ-ում:


Գառնի-Արտաշատ

● Ջրատար կատարած հերթական շրջայցի ժամանակ Գառնու ջրաղբյուրից մինչև եզրինների գերեզմաններն ընկած հատվածում առկա է երկու վթար՝ $Q \approx 12-15$ լ/վ:



**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ**





4.1. Համակարգչային ցանց

Հունվար ամսվա ընթացքում համակարգչային ծառայության կողմից իրականացված հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև՝


- Իրականացվել է երկու հին Dell T610 սերվերների տեխնիկական սպասարկում:
- Իրականացվել է վերոնշյալ սերվերների մաքրման և փոշեգրկման աշխատանքներ:
- Ստուգվել է սերվերների հիմնական սարքավորումների աշխատունակությունը:
- Թարմացվել է սերվերների սարքավորման ծրագրային ապահովումը՝ Firmware և BIOS-ը:
- Տեղադրվել է նոր օպերացիոն համակարգը:
- Իրականացվել են բոլոր անհրաժեշտ կարգավորումները:
- Իրականացվել են սերվերային սենյակի բարելավման աշխատանքներ:
- Վերանայվել և օպտիմիզացվել են սարքավորումների ցանցային միացումները:
- Փոխարինվել են շուրջ 30 լարանցումներ և միացումներ:
- Անցումային մալուխատար միացումներից հանվել են հին՝ շահագործման համար ոչ պիտանի մալուխներ:
- Իրականացվել է վերոնշյալ սարքավորումների մաքրման և փոշեգրկման աշխատանքներ:
- Կազմվել և տրամադրվել են նախագծեր թվային ճանապարհային քարտեզի ստեղծման շրջանակներում:
- Վեոլիա գրուպի IT անվտանգության նոր նախագծի շրջանակներում տրամադրվել է տեղեկատվություն համակարգում առկա օգտատերերի քանակի և այդ օգտատերերի կարգավիճակների մասին:
- Ստեղծվել և կիրառվել են նոր Google Team Drive պանակներ մի շարք բաժինների պարբերական հաշվետվությունների ներբեռնման համար:

4.2 Ինտերակտիվ համակարգ

- Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խմբի կողմից կատարվել են մի շարք փոփոխություններ և թարմացումներ ինտերակտիվ և փաստաթղթաշրջանառության համակարգերում:
- Տեխնիկական տնօրինության ռազմավարության եւ մշտադիտարկման վարչության ԱՏՀ խմբի հետ համատեղ մշակվում և ստեղծվում է տվյալների բազա՝ ջրամատակարարման շարունակականությունը հաշվարկելու համար:
- Մի շարք թարմացումներ և լրացումներ են կատարվել ինտերակտիվ համակարգի Քարտեզներ բաժնում: Ադապտացվել է նոր google map ստանդարտներին:
- Մի շարք հաշվետվություններ են տրամադրվել ՋՌ կոմիտեին, ՀԾԿՀ և ընկերության այլ ստորաբաժանումներին:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





Ընթացիկ տարվա առաջին ամիսը, ինչպես և պետք էր սպասել, ինտենսիվ աշխատանքի ամիս չհանդիսացավ Հանրային կապերի ծառայության համար:

Առաջինն այն պատճառով, որ տոները Նոր Տարվա կապակցությամբ, ավարտվեցին միայն հունվարի 8-ին, և հետո, որն ավելի կարևոր է, եղանակային մեղմ պայմանները, ջրամատակարարման հայտարարված ռեժիմի ապահովումը, արագ արձագանքը վթարներին նվազագույնի հասցրեցին սպառողների ու ՁԼՄ-ների բողոքները և դրանով իսկ թույլ տվեցին ծառայությանը, ընկերության մյուս ծառայությունների նման, կենտրոնանալ առկա մյուս խնդիրների, ինչպես նաև ապագայի ծրագրերի վրա:




Բայց հրատապը, իհարկե, ընթացիկ միջոցառումների լուսաբանումն էր: Դրանց թվում ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Շոնաթան Լաքոթի այցն էր Ընկերության «Արևմուտք» Տարածաշրջանային տնօրինության Գյումրի քաղաքում գտնվող «Շիրակ» տեղամաս ու հանդիպումը Վեոլիա Ջրի ղեկավարների հետ, պարզաբանումները ՁԼՄ-ներին Վեոլիա Ջրի գործունեության տարբեր հարցերի վերաբերյալ, համակարգում վթարների վերացման աշխատանքների ընթացքի ներկայացումը հանրությանը, ապրանքների և ծառայությունների մատակարարման մրցույթների վերաբերյալ հայտարարությունների հրապարակումը ՁԼՄ-ներում և այլն:

Ինչ վերաբերում է նախկինից կուտակված խնդիրներին կամ պարտադիր աշխատանքներին, ապա դրանց թվում 2018թ. իրականացված աշխատանքների վերաբերյալ բազմապիսի հաշվետվություններ կազմելն էր, ընկերության պաշտոնական veolia.am կայքի, facebook-ում, twitter-ում և youtube-ում էջերի սպասարկելը, ջրանջատումների վերաբերյալ հանրության շրջանում հայտարարությունների տարածմանը տեխնիկական տնօրինության կենտրոնական կարգավարական խմբին մասնակից դարձնելը:



**ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**





6.1 Փաստաթղթերի մշակում

● «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի պահանջներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում ծառայությունը մշակեց ընկերության ՀՏԿ-ներում շահագործվող թվով 23 արտադրական վտանգավոր օբյեկտի (18 ամբարձիչ սարքավորում, 2 քլորակայան, 3 կաթսայատուն) տեխնիկական անվտանգության վկայագրերը և ներկայացրեց ընկերության գլխավոր տնօրենի համաձայնեցմանը/հաստատմանը:

- Ներկայումս վերոգրյալ փաստաթղթերի համար իրականացվում են փորձաքննության աշխատանքներ:
- Մշակվել է որակի, առողջության և անվտանգության աշխատանքների տարեկան պլանը և գլխավոր տնօրենի հաստատմանը ներկայացվել ծառայության բյուջեն:
- Բաժանորդների սպասարկման գրասենյակների աշխատակիցների, «1-85» հեռախոսակենտրոնի օպերատորների և ՄՏԱ տնօրինության հաշվետար-օպերատորների մասնագիտական գիտելիքների և հմտությունների նախնական գնահատման և մասնագիտական դասընթացների կազմակերպման նպատակով մշակվել և ընկերության գլխավոր տնօրենի հետ համաձայնեցվել է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման կանոնների, խմելու ջրի որակի հսկողության պահանջների, ջրամատակարարման ցանցերի շահագործման վերաբերյալ, Վարձակալության պայմանագրի և հաղորդակցության հմտությունների վերաբերյալ 55 հարցից բաղկացած հարցաշար:

6.2. Դասընթացներ/սեմինարներ

● Ծառայությունը վերսկսեց համակարգել սույն թվականի ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում ընկերության ԵՏԱ տնօրինության 40 մասնագետ-տեսուչի, «Արևելք» և «Արևմուտք» տարածաշրջանային տնօրինությունների ինժեներա-տեխնիկական անձնակազմի 37 աշխատակիցների մասնագիտական որակավորման դասընթացները: Դասընթացների նպատակն է բարձարցնել ընկերության վերոնշյալ մասնագիտությունների աշխատակիցների կատարողականության մակարդակը, ամրապնդել վերջիններիս շրջանում անվտանգության մշակույթը: Դասընթացների մասնակիցներն ուսուցանվում են առաջին օգնություն, անվտանգության ապահովումը աշխատանքային պարտականությունները կատարելիս թեմաներով:



Առաջին օգնություն



Խողովակաշարների մասնագիտական որակավորման դասընթաց



Հաղորդակցության հմտություններ դասընթաց

6.3. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում

● Ծառայության անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին պլանավորված անվտանգության ստուգայցներ «Արևմուտք» տարածաշրջանային տնօրինության թվով 12 («Ջամբուլ ՕԿՁ», «Լուկաշին ՕԿՁ», «Կովկասյան ՕԿՁ», «Էլեկտրալամպեր ՕԿՁ», «Քանաքեռ ներքին ՕԿՁ», «Քանաքեռ վերին ՕԿՁ», «Կաթի կոմբինատ ՕԿՁ», «Դավթաշեն վերին ՕԿՁ», «Դավթաշեն ներքին ՕԿՁ», «Արաքս ՕԿՁ», «Սիուր ՕԿՁ», «Զեյթուն ՕԿՁ») և «Արևելք» տարածաշրջանային տնօրինության թվով 11 («Զրվեժ ՕԿՁ», «Ձորաղբյուր ՕԿՁ», «Արովյան պուրակ ՕԿՁ», «Ծիծեռնակաբերդ ՕԿՁ», «Սարի թաղ ՕԿՁ», «Մարաշ ՕԿՁ», «Արին Բերդ ՕԿՁ», «Նուբարաշեն ՕԿՁ», «Խարբերդ-ներքին ՕԿՁ», «Խարբերդ-վերին ՕԿՁ», «Արարատյան ՕԿՁ») ՕԿՁ-ներում: Կատարված ստուգայցների արդյունքները գրանցվեցին հատուկ ստուգաթերթիկներում:

● ՈԱԱ ծառայության կողմից ուսումնասիրվել են ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:



● ՀՀ կառավարության 2004թ. հոկտեմբերի 29-ի թիվ 1843-Ն որոշմամբ հաստատված «Գազի տնտեսությունում տարրերի տեխնիկական շահագործման կանոններ և աշխատանքի անվտանգության պահանջներ»-ի և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 22-ի թիվ 2399-Ն որոշմամբ հաստատված «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգերով, իրականացվել է գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման, օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի համար նախատեսված բացվածքի զննում, ծխաօդատար ուղիների քարշի ստուգում:



«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.Երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.Երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am

